

ամենայնիւ դրական պատասխան համարեա չի ստանում ընթերցողը։ Այն եղարակացութիւնը, որին գալիս է հեղինակը մի քիչ առաջ, յետոյ՝ վերջաբանում մի քիչ փոխում է, որովհետեւ հետազոտողը տատանուում է երաշխատորել, որ ապագայում չեն խախտուիլ այն մարդասիրական, անշահ սկզբունքները, որոնցով մտադրութիւն ունէր զեկավարուել Հիլֆսրունդը իր գործունէութեան սկզբում։ Անշուշտ մարդասիրութիւնը, միսիօնարական նախանձախնդրութիւնը և քաղաքական նպատակները այնքան խճառուած են Հիլֆսրունդի գործիչների մէջ, որ գժուար էլ է միմիայն դրական, իդէալական կողմեր սպասել։ Սակայն անկասկած է, որ այնու ամենայնիւ Տաճկաստանի բռնութեան թշուառ զոհերը մնծ օգնութիւն են ստանում գերմանական հայասէրներից։ Հետազօտութեան մէջ գովելի զգուշութեամբ և շրջահայեցողութեամբ արած եղարակացութիւնները ցոյց են տալիս թէ յամենայն դէպս հարցը շատ աւելի բարդ է, քան թւում է առաջին անգամից։ Ցանկալի է, որ հեղինակը շարունակի հետեւել Հիլֆսրունդի գործունէութեան եւ բաժանի հայ ընթերցողների հետ այն նոր տեղեկութիւնները, որ նա ձեռք կը բերի իր հետազօտած հարցի մասին։

I. Ա.

Զ7) Ա. ՇԱՑՈՒՐԵՍՆ. Գրչի հանաբեներ. Մոսկով, 1901 թ. 88 երես, Գինն է 50 կ.։

«Են հանաբին ինչ ասեմ, որ կէսը զորթ չը լինի», ժողովրդի այս խօսքերը հեղինակը բերում է իրը նշանաբան իր գրքոյկի։ Եւ խկապէս, պ. Ծատուրեանը հանաբի ձեռվ դառն ձշմարտութիւններ է ասում ընթերցողին։ Անշուշտ նոր մոքեր և նոր խօսքեր չը կան թէ այդ «հանաբների» և թէ առակների մէջ, այլ նորութիւնը գողարիկ, գեղարուեստական ձեսկերպութեան մէջ է։ Այն, ինչ մտրակել են մեր հրապարակախօսները իրանց յօդուածներում, այժմ բանաստեղծը մի քանի կիսդանի գծերով պատկերացնում է իր ոտանաւորներով։ Այդ հանաբներից մէկը, «Ժողովը», արդէն տպուած էր մեր ամսագրի յունուարի համարում։ Առաջ բերենք մի երկու «հանաբներ» էլ, գրգռելու համար ընթերցողի ախորժակը այդ նոր ձեի մտրակումներով։

**Ահա ձեզ «կաշառուած մամուլը».**

Նրբ հալոց թերթում  
Ներբող եմ կարդում  
Տըզրուկ աղալի անուան ու փողին,  
Խսկոյն իմ մըտքում  
Մի հարց է ծագում.  
«Թերթը ո՞րքան է ստանում տողին...»:

**Իսկ «Հայկական բանակուլի» պատկերը այսպէս է նկարագրում ալ. Ծատուրեանը.**

—Մի՛տք, իմա՞ս չը կալ ձեր գրուածներում...  
«Բայց դուք, ո՞վ պարոն, վաստե՞ր չէք բերում...  
—Փաստե՞ր էք ուզում. համեցէ՞ք, խսկոյն,...  
Ձեր քիթը մեծ է, ձեր դէմքը—դըժգոյն,  
Աչքերնիդ՝ ակնոց, միրուքնիդ՝ երկար...  
Հստ լօգիկալի՝ դուք շա՞տ էք տըխմար...  
«Բայց դո՞ւք... ով պարոն, մի՞թէ կարող էք  
Ողջամիտ դատել, երբ գիշեր ցերեկ  
Թութուն էք քաշում—ձեր փոքրիկ քըթից  
Ծուխն է անպակաս, զորկ էք և միրքից...  
Դո՞ւք էք տըխմարը՝ Հստ լօգիկալի,  
Նև ընթերցողն էլ այդ կը վըկալի»...

**Առակները թարգմանուած են Ֆլորիանի, Լաշամբօդի,  
Գելլերտի, Շատիսբօննի և այլն առակներից:**

Առհասարակ հասարակական ցաւերի մօտով հանդիսաւ չէ կարողանում անցնել մեր բանաստեղծը և նրա «Գրչի հանագը ների» տակ գժուար չէ նկատել վիշտ և թագուն արտասուր...  
Տիսուր է և այն ժպիտը, որ երեսում է գրքի չապկի վրայ նկարած աղջկայ երեսին: Ի դէպ, ալ. Սուրբնեանցի նկարած այդ գլուխը բաւական ատրօրինակ է իր մեծութեամբ և մագերի խտութեամբ...

Կասկած չը կայ, որ այս չքեղ հրատարակուած գրքոյկը  
սիրով կ'ընդունի մեր ընթերցող հասարակութիւնը:

Լ. Ա.

**ԶՑ) ԲԺՊ. ՎԱՀԱՆ ԱՐՃՐՈՒՆԻ. Ակատ ցաւ (պատկերազարդ),  
Թիֆլիս, 1901 թ., գինն է 6 կոպ.։**

Այս գրքոյկը Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութիւնն է և կազմում է բժագ. Վահան Արճրունու ձեռնարկած «Բժշկի զրոյցներ» սերիայի № 2: Գրքոյկը, յարգելի հեղինակի միւս հրատարակութիւնների նման, կազմուած է պարզ